## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2022 թվականի N 216-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին,2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի ,, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին,, թիվ 94-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյա համամասնությունները սահմանելու մասին 2022 թվականի հունվարի 26-ի թիվ 36-Ա որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
23 մարտի 2022թվական

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ղեկավարի
2022 թվականի մարտի 23-ի թիվ 216-Ա որոշման

1. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 01, խումբ 6, դաս 1 <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/>> տողի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<16321.3>> թիվը փոխարինել <<17821.3>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<26812.3>> թիվը՝ <<28312.3>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<36792.3>> թիվը՝ <<38292.3>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<45561.3>> թիվը՝ <<47061.3>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում >> 5113 հոդվածի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը փոխարինել <<1500.0>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը՝ <<1500.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը՝ <<1500.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<0>> թիվը՝ <<1500.0>> թվով:
2. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 06, խումբ 4, դաս 1 <<փողոցների լուսավորում>> տողի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<103549.3>> թիվը փոխարինել <<103867.3>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<115914.3>> թիվը՝ <<116232.3>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<128079.3>> թիվը՝ <<128397.3>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակներում նշված <<139784.3>> թիվը՝ <<140102.3>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Մասնագիտական ծառայություններ>> 4241 հոդվածի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<68.0>> թիվը փոխարինել <<386.0>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<83.0>> թիվը փոխարինել <<401.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<98.0>> թիվը փոխարինել <<416.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<113.0>> թիվը փոխարինել <<431.0>> թվով:
3. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 08, խումբ 2, դաս 3 <<Մշակույթի տներ, ակումբներ>> տողի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<52774.0>> թիվը փոխարինել <<68334.0>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<64462.5>> թիվը փոխարինել <<80022.5>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<76200.0թիվը փոխարինել <<91760.>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<88125.5>> թիվը փոխարինել <<103685.5>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններ>> <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ –ի 4511 հոդվածի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<7200.0>> թիվը փոխարինել <<22760.0>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<13000.0>> թիվը փոխարինել <<28560.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<18900.0>> թիվը փոխարինել <<34460.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<24668.0>> թիվը փոխարինել <<40228.0>> թվով
4.Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 08, խումբ 2, դաս 1 <<Գրադարաններ>> տողի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<5736.5>> թիվը փոխարինել <<17086.5>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<10980.0>> թիվը փոխարինել <<22330.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<15994.0թիվը փոխարինել <<27344.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<21603.0>> թիվը փոխարինել <<32953.0>> թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններ>> /համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ 4511 հոդվածի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<5736.5>> թիվը փոխարինել <<17086.5>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<10980.0>> թիվը փոխարինել <<22330.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<15994.0>> թիվը

փոխարինել <<27344.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<21603.0>> թիվը փոխարինել <<32953.0>> թվով:

5. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 11, Խումբ 1, դաս 2 <<ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ>> տողի և Ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Պահուստային միջոցներ>> 4891 հոդվածի <<1-ին եռամսյակ>> սյունակում նշված <<33540.0>> թիվը փոխարինել <<4812.0>> թվով, <<2-րդ եռամսյակ>> սյունակում նշված <<138008.0>> թիվը՝ <<10928.0>> թվով, <<3-րդ եռամսյակ>>սյունակում նշված <<249175.0թիվը՝ <<220447.0>> թվով և <<4-րդ եռամսյակ>>սյունակում նշված <<347782.0>> թիվը՝<<319054.0>> թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
23 մարտի 2022թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2022 թվականի N 217-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 18-18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԼԵՆ ՍԱՀԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՖԵՆՅԱ ԱՎԱԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 8-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետի <<ա>> ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10022020-08-0032 վկայականը և Մառլեն Սահակի Ղազարյանի (ծնված 09 ապրիլի 1989թվականին, նույնականացման քարտ 010730729 տրված 20 նոյեմբերի 2018 թվականին 028-ի կողմից) 08 փետրվարի 2022 թվականի N 503 դիմումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Արթիկ համայնքի Գ.Նժդեհի փողոց 1-ին փակուղի 18-18/1 հասցեում գտնվող քաղաքացի Մառլեն Սահակի Ղազարյանին և Ֆենյա Ավագի Պետրոսյանին (ծնված 28 հոկտեմբերի 1991թվականին, նույնականացման քարտ 010206068 տրված 03 դեկտեմբերի 2017 թվականին 028-ի կողմից) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, 08-002-0138-0024 կադաստրային ծածկագրով հողատարածքում 231,7քմ ընդհանուր արտաքին մակերեսով ինքնակամ կառուցած բնակելի տունը, 11,3քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպը, 0,8քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպը, 0,4քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպը, 4,0քմ ինքնակամ կառուցված աստիճանը, 5 հատ ինքնակամ բացված դռները, 3 հատ ինքնակամ ձևափոխված դռները, 4 հատ ինքնակամ բացած պատուհանները և 3 հատ ինքնակամ փակած պատուհանները ճանաչել օրինական:

**2.**Ընդունել ի գիտություն, որ

1)Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չիսպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2)Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**3.**Սահմանել, որ սեփականատերը

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Արթիկ համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է 518241 (հինգ հարյուր տասնութ հազար երկու հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

**4.**60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ Կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

**5.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
23 մարտի 2022թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2022 թվականի N 218-Ա

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով և 29-րդ կետի 4-րդ ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Հարություն Հայկի Դավթյանին պատկանող 10 օգոստոսի 2005 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 1401728/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, ք. Արթիկ Սակածե փողոց N 10 հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Սաակածե փողոց 10 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
25 մարտի 2022թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ. կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2022 թվականի N 219-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՍԱՐԱԼԱՆՋ) ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ և 35-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 270 դրական եզրակացությունը, «Սեդրակ Մուրադյան» անհատական ձեռնարկության (ՀՀ ՔՆ պետական լիցենզիա 16072, տրված՝ «27» փետրվարի 2015 թ) կողմից տրամադրված «10» հունիսի 2021 թվականի եզրակացությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-102-0012- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.0998 հեկտար մակերեսով հողամասի վրա քաղաքացի Մարինե Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները պիտանի են շահագործման

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-102-0012- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող **0.0998** հեկտար մակերեսով հողամասի վրա քաղաքացի Մարինե Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված **124.6** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և **153.54** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունները (հետագայում՝ շինություն) ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման (անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակ, Արթիկ համայնք, գյուղ Սարալանջ, 1-ին փողոց, թիվ 30 բնակելի տուն):

2. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը և շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք, 25 մարտի 2022թվականի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2022 թվականի N 220-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ **ՀՈՂԱՄԱՍՈՒՄ** (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՍԱՐԱՏԱԿ) **ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ** ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ **ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ և 35-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 266 դրական եզրակացությունը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-105-0036-0002 կադաստրային ծածկագրով 0.074591 հեկտար մակերեսով հողամասի վրա քաղաքացի Մարինե Հարությունի Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տան անավարտ շինությունը պիտանի է շահագործման

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-105-0036-0002 կադաստրային ծածկագրով **0.074591** հեկտար մակերեսով հողամասի վրա քաղաքացի Մարինե Հարությունի Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված **137.33** քառակուսի մետր ներքին և **156.9** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան անավարտ շինությունը (հետագայում՝ շինություն) ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման (անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակ, Արթիկ համայնք, գյուղ Սարատակ, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 39):

**2.** Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**3.** Օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը և շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

**4.** Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք, 25 մարտի 2022թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2022 թվականի մարտի 25-ի N 221-Ա**

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 18 օգոստոսի 2011 թվականի <<Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության N 1180-Ն որոշման 30, 33 և 34 կետերով, ինչպես նաև 13 նոյեմբերի 2003 թվականի <<Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության N 1532-Ն որոշմամբ՝ համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման և իրականացման նպատակով.

1. Ստեղծել՝

1) համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին և հանձնաժողովի կազմը համալրել համայնքապետարանի աշխատակազմից,

2) քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա. կապի ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Աշոտ Խաչատրյան,

բ. ինժեներական՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ղռաթյան Սեյրան,

գ. բժշկական՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մարտիրոսյան Բաբիկ,

դ. մեքենայացված՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Չարչյան Ներսիկ,

ե. անհատական պաշտպանության միջոցների բաշխման և հասարակական սննդի մատակարարման՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Յոլակ Հովհաննիսյան,

զ. գյուղատնտեսական կենդանիների, բույսերի և անտառների պաշտպանության՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Պասկևիչյան Աշոտ,

է. հասարակական կարգի պահպանման՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Սևակ Դավթյան,

ը. փրկարարական՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Գրիգոր Կարախանյան,

թ. հակահրդեհային՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ստեփան Տոնոյան,

ժ. հետախուզական՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Զոհրաբ Հովսեփյան:

2.Հաստատել՝

համայնքի բնակավայրերում կազմավորումների և անձնակազմերի ցանկը՝ համապատասխան հավելվածով:

2.Հանձնարարել՝

1) տարահանման հանձնաժողովի նախագահին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով և համապատասխան գույքով,

բ. կազմակերպել և իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի ուսուցումը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշման,

գ. կազմել և յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 10-ը հունվարի 1-ի դրությամբ ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի ապրիլի 22-ի թիվ 633-Ն որոշման:

3.Համայնքապետարանի քարտուղարին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ղեկավարի
2022 թվականի մարտի 25-ի N221-Ա որոշման

# Ց Ա Ն Կ

Համայնքի կազմավորումների և անձնակազմերի

1. **Արթիկ համայնք**

1) կապի ՝ 1/3 անձնակազմով
- Խաչատրյան Աշոտ
- Արտուշ Սիմոնյան

2) ինժեներական՝ 1/3 անձնակազմով
- Ասատրյան Գուրգեն
- Թարզյան Տավրոս

3) բժշկական՝ 1/3 անձնակազմով
- Մահորյան Տիգրան
- Աղաքարյան Արտակ

4) մեքենայացված՝ 1/3 անձնակազմով
- Աբրահամյան Ալեքսան
- Տոնոյան Գարիկ

5) անհատական պաշտպանության միջոցների բաշխման և հասարակական սննդի մատակարարման ՝ 1/3 անձնակազմով
- Ասոյան Մերի
- Բզնունի Գայանե

6) գյուղատնտեսական կենդանիների, բույսերի և անտառների պաշտպանության՝ 1/3 անձնակազմով,
- Ադամյան Համլետ
- Մարտիրոսյան Անուշ

7) հասարակական կարգի պահպանման՝ 1/3 անձնակազմով
- Դավեյան Էդգար
- Բաղդասարյան Մխիթար

8) փրկարարական՝ 1/3 անձնակազմով
- Սուքյան Համլետ
- Չթեյան Էդգար

9) հակահրդեհային՝ 1/3 անձնակազմով
- Թանայան Արա
- Չոփիկյան Դավիթ

10) հետախուզական՝ 1/3 անձնակազմով
- Գրիգորյան Արտակ
- Բաղդասարյան Անդրանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2022 թվականի N 222-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ՇԵՆՔԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԹԱՐԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերում և շենքերին հարակից բակային տարածքներում ինժեներական ենթակառուցվածքների վթարային և տեխնիկական վիճակները ուսումնասիրություն կատարելու նպատակով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Աջամօղլյան Արման-համայնքի ղեկավարի տեղակալ-հանձնաժողովի նախագահ
2) Հովհաննիսյան Ցոլակ-համայնքի ղեկավարի խորհրդական-հանձնաժողովի նախագահ
3) Ղության Սեյրան-Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ-հանձնաժողովի անդամ,
4) Թարզյան Տավրոս --զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ հանձնաժողովի անդամ
5) Սեխլեյան Արշակ-համայնքապետարանի բանվոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
25 մարտի 2022թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2022 թվականի N 223-Ա

## ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի նախապատրաստական հանդիպմանը մասնակցելու նպատակով, 2022թ. մարտի 29-ին մեկ օր ժամանակով մեկնում եմ քաղաք Երևան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
28 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2022 թվականի N 224-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32/6, ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ 70,45ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 278-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ 3-րդ մասերով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 7-ի թիվ 31-Ա որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար Գագիկ Սամվելի Բզնունու 2022թվականի հունվարի 5-ի թիվ 58 դիմումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարի 2020թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հակոբյան փողոց թիվ 32/6, հասցեում համայնքի սեփականությունը հանդիսացող գրասենյակային շինությունից 70,45քմ մակերեսով առանձնացվող տարածքը երկու տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրելու մասին» թիվ 278-Ա որոշման 1-ին կետի 3-րդ տողում «երկու տարի ժամկետով» բառերի փոխարեն գրել «5 տարի ժամկետով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
28 մարտի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2022 թվականի N 225-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 194-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ինչպես նաև <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 17 մարտի 2022 թվականի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին>> N 194-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
28 մարտի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ. կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2022 թվականի N 226-Ա

## ՀՐԱՉ ՀԱՄԲԱՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ԱՄԱԼՅԱ ՄԱԹԵՎՈՍԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ՆԵՐՍԵՍ ՀՐԱՉԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԵՎ ԱՄԱԼՅԱ ՆԵՐՍԵՍԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Հրաչ Համբարի Միքայելյանին, Ամալյա Մաթևոսի Միքայելյանին, Ներսես Հրաչի Միքայելյանին և Ամալյա Ներսեսի Միքայելյանին պատկանող 03 նոյեմբերի 2003 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 1359919/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Մեղրաշենում գտնվող բնակելի տանը և նրան ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Մեղրաշեն 9-րդ փողոց 18 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022 թվականի N 227-Ա

## ՌՈՒԶԱՆՆԱ ՀՄԱՅԱԿԻ ԴԱՎԱՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 45-րդ, 45.1 և 53-րդ կետերով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Ռուզաննա Հմայակի Դավայանին պատկանող 16 նոյեմբերի 2007 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /N 2329448/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, ,,Լմբատ 2,, 9 շենք 2 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Թամանյան փողոց 9 շենք բնակարան 2 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ. կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2022 թվականի N 228-Ա

## ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Արթիկի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 16 նոյեմբերի 1994 թվականի թիվ 7 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝ <<Աշոտ Բաղդասարյան>>-ի փոխարեն գրել՝ <<Աշոտ Վոլոդյայի Բաղդասարյան>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2022 թվականի N 229-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022թվականի հունվարի 7-ի թիվ 9-Ա որոշման «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի՝ սույն թվականի ապրիլի 11-ին Արթիկ համայնքի Հովտաշեն բնակավայրում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում» թեմայով:

**ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ.**

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ–Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Փիլոյան
Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ – համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Արա Սուքիասյան

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

տարահանման հանձնաժողովը, կազմավորումների ղեկավարներին

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1)մշակել և մինչև 2022թվականի ապրիլի 1-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,
2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,
3)ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2022թվականը ապրիլի 8-ը

4. Ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022 թվականի N 230-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022թվականի հունվարի 7-ի թիվ 9-Ա որոշման «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի՝ սույն թվականի ապրիլի 11-ին Արթիկ համայնքի Սարատակ բնակավայրում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում» թեմայով:

**ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ.**

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ–Սարատակ բնակավայրի վարչական ղեկավար՝ Դ. Վարդանյան

Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ – համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Արա Սուքիասյան

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

տարահանման հանձնաժողովը, կազմավորումների ղեկավարներին

3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1)մշակել և մինչև 2022թվականի մարտի 29-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,

3)ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2022թվականը ապրիլի 8-ը

4. Ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

5. Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022 թվականի N 231-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 11 ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԹԱԴԵՎՈՍ ՎՌԱՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՀԱՐ ԻՇԽԱՆԻ ԽՈՅԵՑՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 8-րդ կետով, 13-րդ կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով Թադևոս Վռամի Մարտիրոսյանին (ծնված 20 հոկտեմբերի 1963թվականին) և Գոհար Իշխանի Խոյեցյանին (ծնված 01 հունիսի 1975թվականին) 22 մարտի 2022 թվականի N 1257 դիմումը և անշարժ գույքի սեփականության իրավունքի 27 հունվարի 2003 թվականի N 362995 վկայականը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գյուղ Փոքր Մանթաշ 6-րդ փողոց 11 հասցեում գտնվող Թադևոս Վռամի Մարտիրոսյանին և Գոհար Իշխանի Խոյեցյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, 08-115-0037-0007 կադաստրային ծածկագրով հողատարածքում ինքնակամ կառուցված 21,44քմ մակերեսով պարիսպները, 107,1քմ մակերեսով անասնագոմը ճանաչել օրինական:

**2.**Ընդունել ի գիտություն, որ

1)Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2)Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**3.**Սահմանել, որ սեփականատերը

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Արթիկ համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է վճարի 67406(վաթսունյոթ հազար չորս հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

**4.**60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

**5.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022 թվականի N 232-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 57-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 08-107-0026-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետություն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Ուժը կորցրած ճանաչել Արթիկ համայնքի ղեկավարի 04 փետրվարի 2022 թվականի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սպանդարյան բնակավայրի 08-107-0026-0024 կադաստրային ծածկագրով 26,25քմ մակերեսով, Ահարոն Ստեփանյանին պատկանող բնակարանի հասցեավորման մասին>> N 57-Ա որոշումը:

**2.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սպանդարյան բնակավայրի 08-107-0026-0024 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Սպանդարյան 2-րդ փողոց տուն 3 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ. կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2022 թվականի N 233-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՐԵՆՅԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 3/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԳՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արամայիս Սարգսի Սարգսյանի (ծնված 06 մայիսի 1957 թվականին) 16 մարտի 2022 թվականի N 1142 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հայրենյաց բնակավայրի 3-րդ փողոց 1-ին նրբանցք 3/1 հասցեում 08-0062-0008-0009 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 86,6քմ, որը օգտագործում է Արամայիս Սարգսի Սարգսյանը: 86,6քմ մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ Արամայիս Սարգսի Սարգսյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի պահպանվել հողհատկացման փաստաթղթերը, բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը և 11 դեկտեմբերի 2013 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր /գրանցամատյան 3321/, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 1-ին ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Արթիկ քաղաքի Արթիկ համայնքի Հայրենյաց բնակավայրի 3-րդ փողոց 1-ին նրբանցք 3/1 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Հայրենյաց 3-րդ փողոց 1-ին նրբանցք 3/1:

**2.**Վերականգնել Արամայիս Սարգսի Սարգսյանի հողօգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Հայրենյաց 3-րդ փողոց 1-ին նրբանցք 3/1 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 86,6քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 86,6քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

**3.**Հողամասի սահմանները որոշվում են Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

**4.**Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

**5.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 մարտի 2022 թվականի N 234-Ա

## ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 45-րդ, 45.1 և 53-րդ կետերով և Գայանե Մարտունիկի Աղամալյանի 21 մարտի 2022թվականի N 1216 դիմումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Արմեն Լևոնի Նազարյանին ըստ օրենքի 28 դեկտեմբերի 2021 թվականի ժառանգության իրավունքի վկայագրով /գրանցամատյան 4884/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Անկախության փողոց 11/3 հասցեում գտնվող կիսանկուղային տարածքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Անկախության փողոց 11/4 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
30 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2022 թվականի N 235-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ, ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԳՅՈՒԼՆԱՐԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՉԱԹԱԼՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով և 29-րդ կետի 1-ին ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Գյուլնարա Վարազդատի Չաթալյանին ըստ օրենքի 21 դեկտեմբերի 2018թվականի ժառանգության իրավունքի վկայագրով /գրանցամատյան 3467/ փաստագրված Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, գյուղ Մեծ Մանթաշ հասցեում գտնվող 08-079-0046-0003 կադաստրային ծածկագրով հողամասին և շենք-շինությանը տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Մեծ Մանթաշ 16-րդ փողոց 23 հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
31 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2022 թվականի N 236-Ա

**ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 08-002-0040- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 117,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 101,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ՏԱՂԱՎԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքաշինական նպատակներով անհրաժեշտություն է առաջացել Արթիկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 08-002-0040- կադաստրային ծածկագրով Արթիկ քաղաքի Անկախության փողոց 32/3 հասցեում գտնվող 117,0քմ մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 101,0քմ մակերեսով առևտրի տաղավարի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1731-Ն որոշմամբ հաստատված Արթիկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը ընդգրկված է բնակավայրերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ խառը կառուցապատման գոտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի 30 նոյեմբերի թիվ 1731-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի 18 մայիսի թիվ 731-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով և 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձ՝ Դավիթ Հակոբի Իգիթյանի (նույնականացման քարտ 000522664, տրված 13 փետրվարի 2013թվական) 04 մարտի 2022 թվականի N 981 դիմումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող 08-002-0040- կադաստրային ծածկագրով 0,0117 հա մակերեսով հողատարածքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Անկախության փողոց 32/3 հասցեն:

**2.**Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արթիկ քաղաքի Անկախության փողոց 32/3 հասցեում գտնվող 08-002-0040- կադաստրային ծածկագրով 117,0քմ մակերեսով հողամասի՝ վրա ինքնակամ կառուցված 101,0քմ մակերեսով առևտրի տաղավար հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչել Արթիկ համայնքի սեփականության իրավունքը: /հողամասի և շինության հատակագծերը կցվում է/:

**3.**Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում Արթիկ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

**4.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
31 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2022 թվականի N 237-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ 32/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՍՈՆ ԱՍԱՏՈՒՐԻ ՇԱԽՈՒԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սամսոն Ասատուրի Շախուլյանի (ծնված 02 դեկտեմբերի 1954 թվականին) 11 հունվարի 2022 թվականի N 86 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Արթիկ քաղաքի Կոմիտաս թաղամաս Թ կվարտալի նո.19 հասցեում գտնվող 08-002-0083-0022 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,0600հա, որը Սամսոն Ասատուրի Շախուլյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, /05 դեկտեմբերի 1991 թվականի անավարտ բնակելի տան նվիրատվության պայմանագիր/ և Սամսոն Ասատուրի Շախուլյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 912-Ն որոշման 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 53-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.** Հայաստանի Հանրապետության Արթիկ քաղաքի Կոմիտաս թաղամաս Թ կվարտալի նո.19 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Դուրյան փողոց 32/1:

**2.**Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Դուրյան փողոց 32/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սամսոն Ասատուրի Շախուլյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ սեփականության իրավունքով ձեռք բերված 0,0600հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,0600հա մակերեսով հողամասի և մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:

**3.**Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

**4.**Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի քաղաքաշինության հողաշինության բաժնի վրա:

**5.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
31 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2022 թվականի N 238-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀՐԱՆՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի,, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի,, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 15-րդ կետերի դրույթներով 16-րդ կետի ա)ենթակետով և հաշվի առնելով քաղաքացի՝ Հրանտ Հովհաննեսի Գալստյանի 09 փետրվարի 2022 թվականի N 527 դիմումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման N 16092021-08-0022 վկայականը, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայանի շինությունը օրինական ճանաչելու մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով և 29-րդ կետի 1-ին ենթակետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.**Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Հրանտ Հովհաննեսի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 1-ին փողոցի 40/1 հասցեում գտնվող 08-014-0070-0003 կադաստրային ծածկագրով 0,04000հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասում (հիմք՝ իրավունքների պետական գրանցման վկայական, N 16092021-08-0022 տրված 16 սեպտեմբերի 2021թվական) 2021թվականին ինքնակամ կառուցված 23,5քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայանը, 0,03քմ մակերեսով ինքնակամ շարած պատը, 0,2քմ մակերեսով ինքնակամ շարած պատը, 5,5քմ մակերեսով ինքնակամ քանդած պատը, 2,0քմ մակերեսով ինքնակամ քանդած պատը և 1 հատ ինքնակամ ձևափոխած դուռը բավարարում են Հայաստանի Հանրապետության Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով,, սահմանված ինքնակամ կառույցների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

**2.**Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:

**3.**Նշել, որ օրինական ճնաչված շինությունը՝

ա)չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ)չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ)կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ)կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե)չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**4.**Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա)հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայանի շինությունները, որոնց արտաքին և ընդհանուր մակերեսը կազմում է 31,23քմ, որպես ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի որոշմամբ հաստատված ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի ա)ենթակետի և 18-րդ կետի դ)ենթակետի համաձայն, վաճառքի և օրինականացման գինը շինությա յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով, իսկ ինքնակամ ձևափոխված յուրաքանչյուր դռան համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշմամբ հաստատված 16-րդ գոտում ընդգրկված Անուշավան համայնքի համար սահմանված 0,0874 գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝ 31,23քմx20000դրամx0,0874=54590(հիսունչորս հազար հինգ հարյու իննսուն) և 10000դրամx0,0874=874(ութ հարյուր յոթանասուն չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

գ)ինքնակամ շինությունների օրինականացման համար վճարի ընդհանուր չափը սահմանվում է 55464 (հիսունհինգ հազար չորս հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջե:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

**5.**Պարտավորեցնել հողամասի սեփականատեր՝ Հրանտ Հովհաննեսի Գալստյանին (նույնականացման քարտ 003001658, տրված՝ 30 ապրիլի 2014թվական, 028-ի կողմից), սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

**6.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք,
31 մարտի 2022 թվական